ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Լոռու մարզ, Փամբակ համայնք

27.01.2025թ.

2025 թվականի հունվարի 27-ին ժամը 12:00-ին ՀՀ Լոռու մարզի Փամբակ խոշորացված համայնքի Քարաբերդ գյուղի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ «Ա.Ա.Բ Պրոյեկտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից նախաձեռնած հանրային լսումներ (քննարկումներ): Հանրային լսումը կազմակերպվել էր Քարաբերդ բնակավայրի վարչական տարածքում գտնվող «ՀՀ Լոռու մարզի Քարաբերդի քվարցային գաբրոդիորիտների հանքավայրի ընդլայնման» օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ» նախատեսվող գործունեության վերաբերյալ՝ ստորև բերվող ծայրակետային կոորդինատներով սահմանափակված տեղամասերում:

1. Y=8458884.0000, X=4524440.0000,
2. Y=8458920.0000, X=4524705.0000,
3. Y=8459090.0000, X=4524629.0000,
4. Y=8459316.0000, X=4524523.0000,
5. Y=8459210.0000, X=4524227.0000,
6. Y=8458982.0000, X=4524344.0000,

Մասնակցեցին՝

Փամբակ համայնքի ղեկավար Սուրեն Կոստանդյանը, Քարաբերդի վարչական ղեկավար Յուրիկ Շավելյանը, «Ա.Ա.Բ Պրոյեկտ» ՍՊԸ-ի տեխնիկական անվտանգության ղեկավար Դավիթ Ղամբարյանը, Փամբակի համայնքապետարանի ներկայացուցիչները, ինչպես նաև համայնքի բնակիչները և «Քաղաքացու ձայն» CV media-ի ներկայացուցիչները (կից՝ մասնակիցների ցանկը, որը ներկա բնակիչների մեծամասնությունը չստորագրեց և տեսաձայնագրությունը):

Զեկուցումներ՝

Բացման խոսքով հանդես եկավ Փամբակ համայնքի ղեկավար Սուրեն Կոստանդյանը:

Նա ողջունեց բոլորին, շնորհակալություն հայտնեց լսմանը մասնակցելու համար, ներկայացրեց, որ իրեն է դիմել «Ա.Ա.Բ Պրոյեկտ» ՍՊԸ-ն Քարաբերդ բնակավայրի վարչական տարածքում գործող «ՀՀ Լոռու մարզի Քարաբերդի քվարցային գաբրոդիորիտների հանքավայրի ընդլայնման» համար: Դրա համար անհրաժեշտ է օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ իրականացնել, որի շուրջ բնակիչների կարծիքը լսելու համար էլ կազմակերպվել է այս լսումները: Համայնքի ղեկավարը առաջարկեց լսել «Ա.Ա.Բ Պրոյեկտ» ՍՊԸ-ի տեխնիկական անվտանգության ղեկավար Դավիթ Ղամբարյանին:

Ելույթ ունեցավ Քարաբերդի վարչական ղեկավար Յուրիկ Շավելյանը.

- Ես ուզում եմ բնակիչներին ներկայացնեմ, որ տարածքը գործող հանքի տարածքներից դուրս չի գալիս, այն հատվածը, որի համար ցանկանում են

ուսումնասիրություն կատարեն, գտնվում է այժմյան գործող հանքի մեջ: Ընդլայնում, այսինքն չի գնում դեպի մեծ և փոքր ձորերը,

Խոսքը տրվեց «Ա.Ա.Բ Պրոյեկտ» ՍՊԸ-ի տեխնիկական անվտանգության ղեկավար Դավիթ Ղամբարյանին: Նա նշեց, որ իրենց կողմից շահագործվող հանքը 10.8 հա է, շահագործման թույլտվություն են ցանկանում ստանալ 1.2 հա տարածքի համար.

- Մենք ոչ թէ ընդլայնում ենք տարածքը աջ կամ ձախ, հյուսիս-հարավ, այլ մենք մեր հանքի տարածքի մեջ, կղզյակի տեսքով ունենք մեկ ուրիշ տարածք, որը մեզ չի պատկանում: Այն ժամանակին օգտագործվել է այլ կազմակերպության կողմից, ում թույլտվության ժամկետը /լիցենզիան/ ավարտվել է և ներկա պահին գործունեություն չի իրականացնում: Տարածքը կղզյակի ձևով մեր հանքի մեջ է:

Հարց հնչեցրեց համայնքի բնակիչ Գագիկ Շավելյանը.

- Բացի վնասը գյուղին, գյուղացուն ինչ օգուտ եք տվել, բերեցիք գյուղի տակից մինչև գյուղի վերջը 10 մ-ոց ճանապարհ գցեցիք, անասունների արոտավայրը կտրեցիք: Անասունները արածելու տեղ չունեն, 1-2 կմ մինչև գնում են, որ արածեն, հետ գալու ժամանակն է լինում: Անասունը կաթ չի բերում, մարդիկ կաթից զրկվել են:

Մեկ այլ բնակիչ հավելեց.

- Անասունը, որ գալու է արևին, շոգին էդտեղ կանգնի, չի կարողանում կանգնի փոշու պատճառով: Ես Գուգարք գյուղից անասուն եմ առել, աչքիս առաջ 10-12 լիտր կաթ է տվել, հիմա այստեղ շատ քիչ է կթվում:

- Մեկ այլ բնակիչ բողոքեց, որ հող եմ առել, ում ասում եմ գնա հնձի, չեն գնում, ասում են որ փոշի հնձենք, որ անասունը պիտի ուտի:

Բնակիչ Գագիկ Շավելյանը հավելեց, թէ անասունը, որ 8 լիտր կաթ էր կթվում, հիմա 3 լիտրից ավել կաթ չի տալիս: Դա նրանից է, որ փոշին նստում է խոտի, ծաղիկի վրա, ծաղիկը թափվում է: Մարդիկ ոչ թէ խոտ են բերում, այլ չոփեր են բերում.

- Մինչև քարհանքի աշխատելը անասունների դեմից խոտ գրեթե չենք թափել, կամ շատ քիչ ենք թափել, հիմա կեսից ավելը թափում ենք, չեն ուտում:

Ընկերության ներկայացուցիչը նշեց, որ նախորդ հանդիպումների ժամանակ հնչեցված խնդիրները չեն բարձրաձայնվել, բնակիչները խոսել են ճանապարհների խնդրից, որը պատրաստ են նորոգել: Հիմ բողոքում են փոշուց, խնդիր չէ, փոշու հարցն էլ կլուծեն ջրցան մեքենաների քանակը կավելացնեն: Նշեց, որ փոշու դեմ ամենաարդյունավետ միջոցը ճանապարհների ջրելն է, հիմա կիրառում են, բայց քանակը կավելացնեն:

Բնակիչները ջրցան մեքենաների հետ շատ հույսեր չկապեցին, նշեցին, որ ջրցանները աշխատում են աշխատանքային ժամերին, հանքի աշխատանքը շուրջօրյա է, բացի դա փոշի է բարձրանում նաև պայթեցումների ժամանակ:

Հնչեցին տարբեր ակնարկներ և մեջբերումներ, բնակիչները միահամուռ դեմ էին երկրաբանական ուսումնասիրությանը, քանի որ դժգոհ էին առաջացած փոշուց, որը վատ է անդրադառնում անասնապահության և գյուղատնտեսության վրա:

Չսպասելով լսման ավարտին բնակիչները տալով իրենց անհամաձայնությունը լքեցին լսումների դահլիճը:

Հանրային լսման վարող,

Փամբակ համայնքի ղեկավար Ս. Կոստանդյան

Քարարքերդ գյուղի վարչական
ղեկավար Յու. Շավելյան

Ա.Ա.Բ Պրոյեկտ» ՍՊԸ-ի տեխնիկական
անվտանգության ղեկավար՝ Դավիթ Ղամբարյանին

Հանրային լսման արձանագրող՝ Ռ. Մինասյան